619
Բ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԲՐՈՒՑԵԼՅՈԶ

СИГНАЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

A 2539

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԱՆԼՈՒՍ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1939

619:616.929.1 3564
F-99 F pneumoniae

619:616.929.1
Б-99

ԲՐՈՒՑԵԼՅՈԶ

Բրուցելյոզը պատկանում է ազգաբնակչությանը դեռևս քիչ հայտնի հիվանդությունների թվին։ Մինչև վերջին ժամանակներս այդ հիվանդությունը պատահում էր գլխավորապես Մալթա կղզում և Միջերկրական ծովի մոտ մի քանի վայրերում, այդ պատճառով էլ կոչվում էր մալթիական կամ Միջերկրական ծովի տենդ։ Միայն վերջին 10—20 տարվա ընթացքում բրուցելյոզով հիվանդանալու դեպքերն սկսեցին անսպասելիորեն յերևալ յերկրագնդի տարբեր տեղերում։

*Բրուցելյոզը վարակիչ հիվանդություն է, վորով հիվանդանում են և մարդիկ և անասունները։ Այդպիսի հիվանդություններին են պատկանում խլնախտը (*сап*), դաբաղը և սիբիրախտը։ Բրուցելյոզով, ինչպես նաև հիշված հիվանդություններով, մարդիկ վարակվում են ընտանի կենդանիներից։*

Բրուցելյոզն առաջանում է հատուկ միկրոբից, «բրուցելլա» կոչված մանրագույն

կենդանի եյակից, վորը նկատելի յե միայն մանրադիտակի (պատկերը 1000 և ավելի անգամ մեծացնող գործիք) տակ։ Մանրադիտակի տակ բրուցելյան յերևում և ինչպես փոքրիկ կարճ ցուպիկ։ Մեծ քանակությամբ բրուցելյաններ կարող են գտնվել բրուցելյոզով հիվանդ կենդանիների մեզի մեջ, ապրի մեջ, նրանց մաշկի վրա, նրանց կաթի մեջ։

ՎԱՐԱԿՈՒՄԸ

Մարդ բրուցելյոզով վարակվում և կենդանիներից. այդ հիվանդությունը շատ հազվադյուտ դեպքերում և մարդուց մարդուն անցնում, բայց կենդանիների վարակումը մարդուց հնարավոր և։

Բրուցելյանները մարդկանց մարմնի մեջ են թափանցում բերանի, շրթունքների, աչքերի և քթի լորձաթաղանթի միջոցով, քերծվածքների, չանգռվածքների յև նույնիսկ մաշկի մանրագույն ճեղքերի միջոցով։ Անասուններին խնամող մարդը վարակվում և, յեթե բրուցելյոզով հիվանդ կենդանիների հետ շփվելուց հետո, առանց ձեռները լվանալու ծխում և, ձեռք տալիս շրթունքներին, աչքերին, քթին։

Անասնաբուժական աշխատողները վարակվում են բրուցելյոզային կենդանիների ծնելուց հետո ընկերքը ձեռքով անջատելու ժամանակ։

Վարակվում են նաև բրուցելյոզով հիվանդ կենդանիների, մանավանդ այծերի ու վոչխարների հում կաթը, յուղը և բրինդան իրրև ուտելիք գործածելիս։

Հատկապես շատ բրուցելյոզային միկրոբներ են արտադրում կենդանիները վիժման ժամանակ, քանի վոր հսկայական քանակությամբ բրուցելլաներ են պարունակվում դցած պտղի, թաղանթի, ընկերքի և մերձպտղային ջրերի մեջ։

Քանի վոր բրուցելյոզով հիվանդ կենդանիների վիժումները տեղի յեն ունենում սովորաբար գարնանը, մարդկանց վարակվելու մեծ մասը կատարվում է գարնանը և ամռան սկզբին։

ԻՆՉՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ԲՐՈՒՑԵԼՅՈԶԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՈՏ

Բրուցելյոզն ամենից առաջ ընտանի կենդանիների հիվանդություն է։ Նա ախտահարում է վոչխարներին, այծերին, խոշոր յեղջուրավոր անասուններին, խոզե-

ին։ Բրուցելյոզով կարող են հիվանդանալով նաև ձիերը, ուղտերը, շները ու ընտանի թռչունները։ Բայց վոչ բոլոր բրուցելյոզային կենդանիները միանման վտանգավոր են մարդու համար։ Մարդիկ ամենից ավելի հեշտությամբ վարակվում են վոչխարներից ու այծերից, քան խոշոր յեղջուրավոր անասուններից կամ խոզերից։

Բրուցելյոզը խոշոր վնաս է հասցնում սոցիալիստական անասնապահությանը, վորովհետև կենդանիների վիժումներ և առաջացնում։ Բացի դրանից, բրուցելյոզային կենդանիների կաթնատվությունը պակասում է և վոչ կենսունակ սերունդ է ծնվում։ Սակայն բրուցելյոզը կենդանիների մոտ հաճախ միանգամայն գաղտնի յե ընթանում և նրան կարելի յե ճանաչել միայն հատուկ անասնաբուժական հետազոտությունների ոգնությամբ։

Բրուցելյոզը կենդանիների մոտ, ըստ յերևույթին, անբուժելի յե և հիվանդ կենդանիներն իրենց ամբողջ կյանքի ընթացքում վարակ են տարածում իրենց շուրջը։

ԲՐՈՒՑԵԼՅՈԶԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

Բրուցելյոզը մարդկանց մոտ միշտ միա-

տեսակի յերեվան գալիս։ Ամենից հաճախ, վարակվելուց 1—2 շաբաթ անց մարդ ընկնում և տենդել։ Հիվանդը թուլանում և, սառիպված և լինում պառկել։ Նա տաքություն և տալիս, քրտնում և, գլխացավեր ու ընդհանուր թուլություն և ունենում։ Հաճախ ուռչում են հողերը։ Ուրիշ դեպքերում հիվանդները զանգատվում են տանջալից ցավերից մարմնի վորևե մասում— գոտկատեղում, ուսին, վոտին կամ ձեռքին։ Տղամարդկանց մոտ յերբեմն ամորձիների բորբոքում և լինում։

Մի քանի դեպքերում հիվանդությունն սրտաքինով գրեթե չի յերևում, վարակված մարդն իրեն առողջ և համարում։

Հաճախ բրուցելյոզով հիվանդանալը մալարիայի, ռեվմատիզմի կամ ուրիշ հիվանդությունների տեղ են ընդունում։

Բրուցելյոզը վորոշել հնարավոր և միայն հետազոտությունների ոգնությամբ, վորոնք կատարվում են հատուկ լաբորատորիաներում։

Բրուցելյոզը մարդկանց մոտ տևում և սովորաբար 2—3 ամիս, բայց կարող և ձգձգվել ել ավելի յերկար։ Շատ անգամ առողջանալուց հետո վորոշ ժամանակ անց, բրուցելյոզը հիշեցնել և տալիս իրեն մեկ

թեթև ցավերով մարմնի վորևե մասում, մեկ հոդերից վորևե մեկի ուռուցքով ու հիվանդոտությամբ։

Մահացության դեպքերը բրուցելյոզից հազվադյուտ են, բայց աշխատունակության ավելի կամ պակաս յերկարատև իջեցում կամ կորուստ՝ բավականին հաճախ ե նկատվում։

ԲՐՈՒՑԵԼՅՈԶԻՑ ՆԱԽԱՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բրուցելյոզի դեմ հիմնական պայքարը տանում են անասնաբուժական կազմակերպությունները, առանձնացնելով ու մեկուսացնելով հիվանդ անասուններին: Բացի դրանից, ԽՍՀՄ ում գոյություն ունի մի օրենք, վորն արգելում ե բրուցելյոզով հիվանդ անասուն ունեցող տնտեսություններում գործածել հում կաթ, արտահանել այն և նրանից հում մթերքներ՝ բրինզա, յուղ և այլն պատրաստել։ Բրուցելյոզային կենդանիների կաթը կես ժամի չափ պետք ե տաքացնել 70 աստիճանում (պաստերիզացիա), իսկ այնտեղ, վորտեղ դրա համար հատուկ գործիքներ չկան, պետք ե յեռացնել, նրա մեջ գտնված միկրոբներին

վոչնչացնելու համար։ Բրուցելյոզային կենդանիների միսը կարելի յե գործածել կերակրի մեջ, միայն լավ յեփելուց հետո։ Միսը բաժանելուց հետո հարկավոր է ուշադիր կերպով լվանալ ձեռները։

Բրուցելյոզով հիվանդ անասուն ունեցող տնտեսություններում նախազգուշական միջոցների վերաբերյալ որենքի խիստ պահպանումը չափազանց կարևոր է։ Դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի ինքը՝ ազգաբնակությունն ոգնի հողային ու անասնաբուժական մարմիններին պահպանելու առողջ տնտեսությունները, բրուցելյոզի վարակը նրանցում մուտք գործելուց։ Յեթե, որինակ, անասունները վիժում են, հարկավոր է այդ մասին հայտնել շրջանային հողբաժնին հետազոտություն կատարելու համար։ Վիժումից հետո հարկավոր է կենդանուն անմիջապես առանձնացնել, սխտահանել վիժման տեղը և այնուհետև վարվել ըստ անասնաբուժների ցուցումների։

Ազգաբնակությունն ոգնության պետք է գնա նաև բրուցելյոզի դեմ պայքար տանող բժշկական հիմնարկներին։ Յեթե մարդկանց մոտ հիվանդացումներ են յերևվացել, վորոնք նման են բրուցելյոզին, ապա հար-

կավոր և այդ մասին հայտնել շրջանային առաջնին կամ բժշկական տեղամասին։

Բրուցելյոզով հիվանդ, կամ այդ հիվանդությունը տարած մարդը վտանգավոր չի իր ընտանիքի և շրջապատողների համար, եթե նա հետևում է մաքրությանը։ Ամենից առաջ անհրաժեշտ է մաքուր պահել արտաքնոցը, վորովհետև բրուցելյոզով հիվանդների կղանքը և մեզը վարակիչ են։

Հարկավոր է ժամանակ առ ժամանակ արտաքնոցներին քլորակիր կամ չհանգած կիր, ծայրահեղ դեպքում հող լցնել։ Արտաքնոցից գալով, հիվանդը պետք է ուշադիր կերպով լվանա ձեռքերը սապոնով ու խոզանակով։

Նախազգուշական խիստ միջոցներ պահպանել պարտավոր է բրուցելյոզով հիվանդ անասուններին, մանավանդ այծերին ու վոչխարներին խնամող աշխատակիցը։

Վորպեսզի թե ինքը չվարակվի և թե շրջապատողներին չվարակի, անհրաժեշտ է անասուններին խնամելու ամբողջ աշխատանքը կատարել հատուկ հագուստով։ Հատուկ հագուստը պետք է թողնել աշխատանքի տեղում և նրանով տուն չգնալ։ Չի կարելի առանց ձեռնոցների ձեռք տալ կենդանիներին, գոմաղբին և շրջապատող

առաքյանների։ Կթողները յուրաքանչյուր կենդանուն կթելուց հետո պետք է լվանան ձեռքերը։

Անհրաժեշտ է անասնաբակում ունենալ լվացարան, սապոն, սրբիչ, ինչպես նաև անոթ ախտահանիչ (վարակազերծող) լուծույթով ըստ անասնաբուժական անձնակազմի ցուցումի։

Անասնաբակից հեռանալուց առաջ հարկավոր է դոմաղբից ու ցեխից մաքրել կոշիկները, թրջել այն ախտահանիչ լուծույթով կամ կուպը քսել և ձեռքերը լվանալ ջրով, սապոնով ու խոզանակով։

Չի կարելի թույլ տալ, որ կողմնակի մարդիկ, մանավանդ յերեխաներ մտնեն հիվանդ կենդանիների համար յեղած շենքը։ Հարկավոր չե նաև կենդանիներին ընակելի շենքեր տանել։

Ինամողների համար վտանգավոր և հանդստանալ ու քնել հիվանդ կենդանիների շենքում, կարելի յե վարակվել։ Հատուկ զգուշություն պետք է պահպանել ձագ ծնելու և հորթ բերելու ժամանակ։

Վիժման դեպքում, ձեռքերով չկպչելով պտղին, պետք է դնել այն ամուր (մետաղե) արկղի մեջ և ուղարկել անասնաբուժա-

2539

(34)

434

կան լաբորատորիա, կամ այրել, կամ թե խմբը թաղել գետնի մեջ, իսկ այնտեղ, վորտեղ կատարվել է վիժումը, ախտահանել։

A 1/2539

Պատասխանատու՝ բժ. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0037257

Գլավլիտի լիազոր Ե 2222
Պատվեր № 490 Տիրաժ—3000

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ի Հրատա
«Ա. Հ»-ի Տպարան, Յերև

40 Գ.